ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13-Ա

ք. Երևան 23 մայիսի 2014թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով. Ս.Սահակյան, Ա. Շուշյան, Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 44-րդ հոդվածի, քննարկելով ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից պաշտոնավարման ընթացքում էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հարցը,

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հաստատել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանի կողմից պաշտոնավարման ընթացքում էթիկայի կանոնների խախտման հարցի վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն կից հավելվածի**:

2. Առաջարկել ՀՀ բնապահպանության նախարարությանը, ի կատարումն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի պահանջների, եզրակացությունը տեղադրել ՀՀ բնապահպանության նախարարության կայքէջում:

3. Էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը սահմանված կարգով ուղարկել՝ (1) Հայաստանի Հանրապետության Նախագահին, (2) ՀՀ Վարչապետին՝ որպես «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով ՀՀ բնապահպանության նախարարի վերադաս:

Հանձնաժողովի նախագահ ***Ս. Սահակյան***

Հավելված
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց
էթիկայի հանձնաժողովի
23.05.2014թ. թիվ 13-Ա որոշման

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ[1] Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով. Ս.Սահակյան, Ա. Շուշյան, Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան և Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 44-րդ հոդվածի, քննարկեց ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից պաշտոնավարման ընթացքում էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հարցը:

1. **Վարույթի հարուցումը**

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն Սոնա Այվազյանը 04.04.2014 թվականին ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը քննարկելու վերաբերյալ դիմում է ներկայացրել Հանձնաժողով:

Դիմումում նշված է. «*Սույն թվականի մարտի 25-26-ը «Պատասխանատու հանքարդյունաբերություն, մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով անցկացվել է միջազգային կոնֆերանս, որի ընթացքում տեղի է ունեցել միջադեպ բնապահպանական ակտիվիստների և ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի միջև: ... Ակցիայի մասնակիցներից Ապրես Զոհրաբյանը մեջբերում է արել ՀՀ բնապահպանության նախարարարության նախկին աշխատակցի ֆեյսբուքյան գրառումից, որում ՀՀ բնապահպանության նախարարությունը որակվել է որպես «գերեզմանոց», ինչին ի պատասխան ՀՀ*

[1] Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում քննարկման առարկա է դարձնում Արամ Հարությունյանի՝ որպես ՀՀ բնապահպանության նախարարի վարքագիծը, հետևաբար սույն փաստաթղթում պաշտոնը հիշատակելիս կօգտագործվի «ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյան» ձևակերպումը: Միաժամանակ, նշենք, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի ապրիլի 30-ի թիվ ՆՀ-96-Ա հրամանագրով ՀՀ բնապահպանության նախարար է նշանակվել Արամայիս Գրիգորյանը:

բնապահպանության նախարարն ասել է. «Չափդ ճանաչի, ականջներդ կպոկեմ, կրամ ձեռքդ, լակոտ»:

Դիմողը գտնում է, որ. «...ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից վիրավորանք պարունակող արտահայտություններ և սպառնալիքներ թույլ տալը բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող հանրային ծառայողին վայել վարքագիծ չէ և համարվում է էթիկայի կանոնների կոպիտ խախտում, որպեսի պարագայում վտանգվում է նաև հարգանքի և վստահության ձևավորումը նրա ներկայացած մարմնի նկատմամբ»:

2014 թվականի ապրիլի 25-ի թիվ 12-Ա որոշմամբ Հանձնաժողովն Արամ Հարությունյանի կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը քննարկելու նպատակով իր նախաձեռնությամբ հարուցել է վարույթ:

ՀՀ Նախագահի 2014 թվականի ապրիլի 3-ի ՆՀ-48-Ա հրամանագրով ՀՀ Կառավարության հրաժարականն ընդունվել է, իսկ ՀՀ Կառավարության անդամները շարունակել են պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության ձևավորումը:

ՀՀ Նախագահի 2014 թվականի ապրիլի 30-ի թիվ ՆՀ-96-Ա հրամանագրով նշանակվել է ՀՀ բնապահպանության նախարար և դադարեցվել է ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատար Արամ Հարությունյանի լիազորությունները:

ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 8-ի N 488-Ա որոշմամբ Արամ Հարությունյանը նշանակվել է ՀՀ Կոտայքի մարզպետ:

Մինչ այդ, 2014 թվականի ապրիլի 29-ի Ե-273 գրությամբ Հանձնաժողովը ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատար Արամ Հարությունյանին տեղեկացրել է հարուցված վարույթի վերաբերյալ և առաջարկել տասնօրյա ժամկետում ներկայացնել իր առարկություններն ու բացատրությունները դիմումում ներկայացված հարցերի, ինչպես նաև համացանցում տարածված տեսանյութերում պատկերված միջադեպի առանձին դրվագների վերաբերյալ:

2014 թվականի մայիսի 8-ի թիվ 5/04.2/51177 գրությամբ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարից ստացվել է պատասխան, ըստ որի՝ «ՀՀ Նախագահի 2014 թվականի ապրիլի 30-ի թիվ ՆՀ-96-Ա հրամանագրով ՀՀ բնապահպանության նախարար է նշանակվել Արամայիս Գրիգորյանը»:

Հանձնաժողովը 13.05.2014 թվականի Ե-292 գրությամբ ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանին կրկին ուղարկել է վարույթ հարուցելու մասին որոշումը և կից փաստաթղթերը՝ խնդրելով քննարկվող հարցի վերաբերյալ ներկայացնել առարկություններ և բացատրություններ:

Արամ Հարությունյանն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

2. Վարույթի առարկան և շրջանակը

Վարույթի շրջանակում Հանձնաժողովը քննարկում է այն հարցը, թե արդյո՞ք ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից «Չափդ ճանաչի, ականջներդ կպոկեմ, կտամ ձեռքդ, լակոտ», «առանց հասկանալու, առանց գրագիտություն իմանալու, առանց պատկերացնելու... իմացեք, որտեղ ինչ եք խոսում, հիմարություններ դուրս չտաք», «Դուք պետք է դիմեք բժշկի, դուք հիվանդ եք, երիտասարդ հիվանդ եք» արտահայտություններ անելը բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների խախտում է, թե ոչ:

3. Իրավական հիմքերը

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները նորմերի համակարգ է, որոնք միտված են ապահովելու բարձրաստիճան պաշտոնատար անձի պատշաճ վարքագիծը, ամրապնդելու հասարակության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը պարտավոր է հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում է իր լիազորություններն իրականացնելիս[2]:

4. ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի բացատրությունները

Արամ Հարությունյանն օրենքով սահմանված ժամկետներում Հանձնաժողովին առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել, ինչպես նաև չի վիճարկել դիմումատուի կողմից վկայակոչված և հանձնաժողովի կողմից առաջադրված փաստերը:

---

[2] «Պետական պաշտոնյաների վարքագծի կանոնների վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի մայիսի 11-ի թիվ 2000 (10) հանձնարարականի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պետական պաշտոնյան պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս հարգալից վերաբերմունք դրսևորել քաղաքացիների, ինչպես նաև իր ղեկավարների, գործընկերների և ենթակաների հետ:

Միաժամանակ, 2014 թվականի մարտի քսանվեցին «1in.am» էլեկտրոնային լրատվամիջոցին տված հարցազրույցում[3] բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը պարզաբանում է տվել միջադեպի առթիվ: Մասնավորապես՝ Արամ Հարությունյանը նշել է. «Երբ որ միջոցառումը արդեն սկսվում էր, մի խումբ բնապահպաններ, բնապահպանության ներկայացուցիչներ, նաև պարզապես մարդիկ մոտեցան և փորձ կատարեցին միջոցառումը խանգարել... Ստեղծված իրավիճակում ես, բնակաբանաբար, խնդրեցի և առաջարկեցի, որպեսզի այդ քննարկումը դուրս բերվի դահլիճից և չպլանավորված նաև առաջարկեցի, որպեսզի բոլոր հարցերի պատասխանը ես ներկայացնեմ դրսում: Եվ բնականաբար նաև հորդորեցի, որպեսզի խոսելուց լինեն ավելի շատ մասնագիտական մոտեցումներ...Ցավոք սրտի, ես ուզում եմ արձանագրել, որ, բնականաբար, այնպիսի տպավորություն էր այդ միջոցառման ժամանակ, որ գոռալով հնարավոր է ինչ-որ խնդիրներ բարձրացնել, ուղղակի տպավորություն ստեղծել, որ գոռալով հարցեր են կարգավորում... Եվ անհիմն և մեղադրանքներ և տարբեր տիպի անձնական բնույթի, նաև նախարարության աշխատակիցների հասցեին տարբեր տիպի արտահայտություններ հնչեցին:...Ես խնդրում եմ նաև, Դու՛ք, ինքներդ, եզրակացություն կատարեք, երբ բարձրանում են նստատեղերի վրա, երբ դու փորձում ես շփվել լրագրողների հետ, պատասխանել լրագրողի հարցերին և տարբեր կողմերից բարձրացվում են խաչաձև հարցեր...Եվ բոլոր հարցերին, այդ թվում նաև՝ խաչաձև, տվել եմ պատասխաններ, խնդրել եմ, որպեսզի այդ հարցերը լինեն մասնագիտական...բնականաբար այն հարցերը, որոնք գալիս են անձնական դաշտ, մենք նույնպես փորձել ենք նաև այդպիսի պատասխաններ ներկայացնել և որակավորումներ տալ... Որևիցե նախապատրաստված, որևիցե միտումնավոր, որևիցե առիթ չի եղել...

Ես կարող էի ասել, որ ես ընդամենը նախապատրաստված, պլանավորած հարցազրույց չունեմ, գլխիկոր հեռանայի, բայց ես դա չարեցի և պատասխանեցի բոլոր հարցերին... Բոլոր արտահայտությունները, այդ թվում նաև՝ տհաճ, որը վերաբերվել է բնապահպանության նախարարարության աշխատակիցիներին, կոլեկտիվին, ինձ անձնապես, այդ թվում նաև տհաճ, որը չի էլ արծարծվել, ես չնայած խոսում էի, բայց հետևից դա լսում էի և ես ստիպված եղա արձագանքել, այդ թվում նաև՝ կոշտ արձագանք...»:

Այն հարցին, թե արդյո՞ք Արամ Հարությունյանը չի պատրաստվում կոշտ արձագանքի համար ներողություն խնդրել՝ պատասխանել է. «Թո՛ղ այն մարդիկ, ովքեր այդ իրավիճակը ստեղծում են, թո՛ղ նաև իրենք մտածեն, որ պետք է այն նշածողը, որը հենց վերաբերվում է մեզ՝ քաղաքական գործիչներին,

[3] http://www.youtube.com/watch?v=Fv-nO5WHVno

կառավարության անդամներին, հանրային հատվածին, թո՛ղ այդ նշածողը չիջնի երբեք. ես առաջարկում եմ այդպես վարվել հետայսու...»:

Հարցին, թե գտնում է արդյո՞ք որ ճիշտ է վարվել՝ Արամ Հարությունյանը պատասխանել է. «Ես գտնում եմ, որ ես գործել եմ տվյալ իրավիճակին համարժեք և տվել եմ այն համարժեք պատասխանը, ինչ որ անհրաժեշտ էր. երբ որ քեզ բերում են անձնական դաշտ և փորձում խաչաձև հարցերով ուրիշ ուղղությամբ տանել, շփոթեցնել և շփոթմունքի մեջ արդեն մեկ այլ հետաքրքրություն գտնել: Ես ափոսոսում եմ, շատ եմ ափոսոսում, որ այդ քննարկումը վերածվեց նման վիճակի:...

Ես չեմ պատրաստվում որևիցե մեկին վատ վիճակի մեջ դնել կամ կոպտել կամ չքննարկել: Ճիշտ հակառակը՝ ես խնդրում եմ, առաջարկում եմ ձեզ բոլորիդ, նույն մամուլի ներկայացուցիչներին, նաև Ձեզ, նաև Ձեր գործընկերների համար պետք է լինի վիրավորական, երբ որ ես հիմա հարցին պատասխանեմ, կամ պատասխանի ընթացքի մեջ լինեմ, ուղղակի չորս կողմից սկսեն հայհոյել կամ բարձր գոռալ, Ձեզ համար պետք է առաջինը լինի վիրավորական, առաջին սաստողը Դուք պետք է լինեք... Ես իմ գործունեության ընթացքում և հետայսու նույնպես միշտ գիտեմ այն սահմանը, որից ներքև երբեք չպետք է իջնել և հորդորում եմ բոլորին ու խնդրում՝ այն սահմանը, որը կվերաբերվի անձնականին, երբեք մի՛ իջեք այդ սահմանի մեջ, երբեք մի՛ անցեք անձնական գործողությունների... Ես գործել եմ ստեղծված իրավիճակին համարժեք...Փորձել եմ սաստել բոլոր նրանց, ովքեր որ բառիս բուն իմաստով անկարգություն ու խուլիգանություն էին հրահրում, փորձել եմ սաստել և, ցավոք սրտի, այդ սաստելու ընթացքում, ցավոք սրտի, եղել է կոշտ արձագանք... Ես բոլորին առաջարկել եմ՝ խնդրում եմ Ձեզ՝ մի՛ գոռացեք, մի՛ վիրավորեք, մի՛ անպատվեք, մի՛ անվանեք տարբեր անվանակոչություններով, մի՛ ասեք՝ դիակ, մեռել և այլն: Ձեր մեջ եթե կան մասնագետներ, որ հասկանում են այս ամեն ինչից, խնդրում եմ՝ ասե՛ք, թո՛ղ գան խոսենք... մի՛ խանգարեք միջոցառումը, դուրս գանք դրսում Ձեր հարցերին պատասխանեմ, և էս պարագայում, երբ դու շուռ ես գալիս և տեսնում, որ երբ որ դու նստած էիր քո տեղում արդեն կանգնած են, էն մյուսը հետևից է խոսում, էն մյուսը էն կողմից է խոսում ու խաչաձև հարցերի միջոցով... ես պատասխանում եմ բոլոր հարցերին.... Հիմա ճիշտ եմ արել թե ոչ, թող դատի հասարակությունը և թող դատեն նրանք, ովքեր կոչված են դրա համար. ես կարծում եմ, որ ես պաշտպանել եմ հազար և ավելի աշխատակցի շահերը և ես թույլ չեմ տա որպեսզի բնապահպանության նախարարության հազար աշխատակիցների անվանեն դիակ կամ գերեզմանատուն:...»:

5. **Հանձնաժողովի հետևությունները**

Անդրադառնալով բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից էթիկայի կանոնների խախտման հարցին՝ Հանձնաժողովը փաստում է, որ հանրային ծառայությունը հիմնվում է որոշակի արժեքների վրա և պետք է վայելի հանրային վստահություն, որի դեպքում քաղաքացիները հավաստիացած են, որ հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեությունը միտված է հանրային շահերի արդարացի սպասարկմանը: Այս առումով, կարևորվում է հանրությանը ծառայելիս նվիրվածության, պրոֆեսիոնալիզմի և բարեկրթության սկզբունքին հետևելը, որի ապահովումն արտացոլված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված կանոնում:

Հիշատակված նորմը նախատեսում է բարձրաստիճան պաշտոնատար անձի պարտականությունը՝ հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

Հանձնաժողովը գտնում է, որ այս կանոնի ենթադրյալ խախտման փաստը քննարկելիս անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

Ա. Կարգավիճակը, որում հանդես է գալիս պաշտոնատար անձը.

Այս առնչությամբ անհրաժեշտ է պարզել անձի կողմից իր պարտականությունների կատարման հանգամանքը, քանի որ պաշտոնավորման ընթացքում պաշտոնատար անձինք գտնվում են ոչ միայն պաշտոնեական (ծառայողական) հարաբերությունների մեջ՝ իրականացնելով իրենց լիազորությունները, այլ նաև հանդես են գալիս մասնավոր կարգավիճակում՝ հայտնվելով այլ՝ անձնական, քաղաքացիաիրավական, ընտանեկան և այլ իրավահարաբերությունների մեջ (օրինակ՝ բնակարանում ընտանիքի անդամի հետ վիճաբանություն), որի շրջանակներում պետք է իրացվեն համապատասխան օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության մեխանիզմները: Հարկ է նկատել, որ, թեև մասնավոր կարգավիճակով կատարված գործողությունները դուրս են այս կանոնի կիրառության շրջանակից, սակայն դրանք ևս կարող են հանգեցնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված էթիկայի այլ կանոնների խախտման, հատկապես եթե վարքագիծը վտանգում է բարեխղճության համակարգի ամբողջականությունը և դրա նկատմամբ հասարակական վստահությունը:

Բ. Պաշտոնատար անձի վարքագծի բնութագրիչները և հատկանիշները.

Պաշտոնատար անձի վարքագիծը քննարկելիս Հանձնաժողովը ուշադրություն է դարձնում գործողության (անգործության) բնույթին՝ պարզելու համար, թե արդյո՞ք պաշտոնատար անձն անպարկեշտ կամ արհամարհական է

հանդես եկել՝ նսեմացնելով անձանց կամ ընդգծելով իր առավելությունը, արդյո՞ք օգտագործել է վիրավորական արտահայտություններ, արդյո՞ք պաշտոնատար անձի վարքագիծն իրենից ներկայացնում է գործողությունների շղթա, թե առանձին դրվագ, ո՞ր պայմաններում և ինչպիսի՞ հանգամանքներում է դրսևորվել վիճարկվող վարքագիծը, որքանո՞վ է պաշտոնատար անձի վարքագիծը վնասում հանրային իշխանության և հանրային ինստիտուտների հեղինակությանը, հասարակությանը, այլ անձանց իրավունքներին և իրավաչափ շահերին:

Գ. Այն անձանց վարքագիծը, ում հետ շփվում է պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս.

Այս չափանիշի ներքո Հանձնաժողովը գնահատում է այլ անձանց գործողությունները և դրանց նպատակայնությունն ու շարժառիթները: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, թե հանրային իշխանություն-քաղաքացի շփումներում բարձրացվող հարցադրումները կամ առաջ քաշված տեսակետները, արված արտահայտությունները որքանո՞վ են նպատակաուղղված հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանն ու լուծումների առաջադրմանը:

Հանձնաժողովը գտնում է, որ սադրիչ գործողությունների դեպքում կամ մասնավոր անձանց կողմից իրավունքի չարաշահումների պարագայում պաշտոնատար անձինք պետք է օգտվեն առավել լայն պաշտպանությունից: Հանձնաժողովը ընդգծում է, որ ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ-ի կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը, այդ թվում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, ամրագրում են անձի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: «Մասնավոր կյանքը» ներառում է նաև այլ անձանց հետ փոխգործունեության շրջանակը անգամ հասարակական շփումներում[4]: Մյուս կողմից, այս իրավունքի իրավաչափ իրացնողներ են նաև պաշտոնատար անձինք, հանրային գործիչները, որոնք այլ անձանց հետ համահավասար հիմունքներով ունեն իրենց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի և պաշտպանության «իրավաչափ սպասում»[5]:

Միաժամանակ, եթե պաշտոնատար անձ-քաղաքացի շփումներում քաղաքացիները հանդես են գալիս որպես իրավունքի իրավաչափ իրացնողներ, ապա այդ իրավիճակում պաշտոնատար անձանց վարքին և զսպվածությանը ներկայացվող պահանջներն առավել խիստ են:

---

[4] Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Փեքն ընդդեմ Միացյալ թագավորության, գործ no.44647/98, պարագրաֆ 57:

[5] Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Վան Հաննովերն ընդդեմ Գերմանիայի, գործ no.59320/00, պարագրագ 51:

Հետևաբար, առկա խնդիրների լուծմանն ուղղված կառուցողական երկխոսության հարթակ ձևավորելու հարցում կարևոր է փոխադարձ հարգանքի վրա քաղաքացի-պաշտոնատար անձ շփումների մշակույթի ամրապնդումը և դրա ուղղությամբ տարվող աշխատանքներում Հանձնաժողովը ընդգծում է նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերը:

Դ. Պաշտոնատար անձի վարքագծի համաչափությունն ու համարժեքությունը.

Պաշտոնատար անձի վարքագծի համաչափությունը գնահատելիս Հանձնաժողովը պարզում է, թե արդյո՞ք պաշտոնատար անձը դրսևորել է զսպվածություն, հանդուժողականություն, համբերատարություն և շրջահայացություն[6], արդյո՞ք հաշվի է առել քննարկվող հարցի կարևորությունը, դրա նկատմամբ հանրային հետաքրքրությունը:

Ե. Պաշտոնատար անձի կողմից իր վարքագծի գնահատումը.

Հանձնաժողովը հաշվի է առնում ինչպես բարձրաստիճան պաշտոնատար անձի գործողությունները և բացատրությունները դեպքի ժամանակ, այնպես էլ դրանից անմիջապես հետո: Կարևորվում է այն հարցը, թե արդյո՞ք բարձրաստիճան անձն ընդունելի է համարում արարքի կատարումը, արդյո՞ք ձեռնարկվել են վարքագծի փոփոխությանն ուղղված քայլեր (օրինակ՝ իրավիճակի հարթումը, միջադեպից անմիջապես հետո հանգամանքների վերաբերյալ հրապարակային պարզաբանում տալը և, ըստ անհրաժեշտության, ներողության հայցելը): Հետևաբար, Հանձնաժողովը գնահատում նաև գործողությունների շղթայական ազդեցությունը:

Վերոնշյալ չափանիշների լույսի ներքո քննարկելով հարցը, ուսումնասիրելով վարույթի նյութերը, այդ թվում՝ ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի և ակտիվիստների միջև տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ համացանցում տեղադրված տեսագրությունները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի և ակտիվիստների միջև բանավեճը տեղի է ունեցել «Պատասխանատու հանքարդյունաբերության կայացումը Հայաստանում, հնարավորություններ և մարտահրավերներ» խորագիրը կրող համաժողովի շրջանակներում, որին Արամ Հարությունյանը հրավիրվել է մասնակցելու ի պաշտոնե: Այսինքն՝ այն ժամանակ, երբ տեղի է ունեցել միջադեպը Արամ Հարությունյան իրականացրել է իր պաշտոնեական լիազորությունները:

---

[6] Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Շկալկան ընդդեմ Լեհաստանի, գործ no. 43425/98, պարագրաֆ 34:

Ըստ համացանցում տարածված տեսագրությունների[7]՝ Արամ Հարությունյանի և ակտիվիստների միջև միջադեպը եղել է բազմադրվագ: Նախ, ակտիվիստները ՀՀ բնապահպանության և ՀՀ էկոնոմիկայի նախարարներին առաջարկել են խմել, ըստ ակտիվիստների հանքարդյունաբերության թափոններից աղտոտված գետերի ջրերը:

Այս ընթացքում, Արամ Հարությունյանը դիմել է ակտիվիստներին հետևյալ արտահայտությամբ. «Առանց հասկանալու, առանց գրագիտություն իմանալու, առանց պատկերացնելու..., իմացեք, որտեղ ինչ եք խոսում, հիմարությունների դուրս չտաք»[8]:

Այնուհետև, ակտիվիստներից մեկը մեջբերել է ՀՀ բնապահպանության նախարարարության նախկին աշխատակցի ֆեյսբուքյան գրառումը, որում ՀՀ բնապահպանության նախարարությունը որակվել է որպես «գերեզմանոց», ինչին ի պատասխան Ա. Հարությունյանը ասել է. «Չափդ ճանաչի, ականջներդ կպոկեմ, կտամ ձեռքդ, լակոտ»[9]:

Վերջապես, ի պատասխան բնահապահպան-ակտիվիստ Աննա Շահնազարյանի դիտարկմանը, թե «Դուք բնավիրման նախարար եք, դուք շինարար եք, ընդամենը ասֆալտ գցող եք: Բնապահպանությունը թողեք մասնագետներին, բնապահպանության մասին խոսելու իրավունք չունեք: Դուք ընդամենը կարողանում եք ավիրել», Արամ Հարությունյանը պատասխանել է «Դուք պետք է դիմեք բժշկի, դուք հիվանդ եք, երիտասարդ հիվանդ եք»[10]:

Հանձնաժողովը գտնում է, որ «առանց հասկանալու, առանց գրագիտություն իմանալու», «հիմարություններ դուրս չտաք», «դուք հիվանդ եք, երիտասարդ հիվանդ եք», «ականջներդ կպոկեմ, կտամ ձեռքդ, լակոտ» արտահայտություններն անգամ քաղաքացիների միջև մասնավոր շփումներում արտահայտում են վիրավորանք. դրանք իրենց բնույթով բացահայտում են անձի վարքի, անձնական հատկությունների վերաբերյալ բացասական գնահատական և արհամարհանք, որոնք կարող են նսեմացնել անձն ու արժանապատվությունը: Բացահայտաբար, հանրային ինստիտուտների ներկայացուցիչների հետ շփումներում պաշտոնատար անձանց կողմից այդ արտահայտությունների գործածությունն ակնհայտորեն չի արտահայտում հարգանք քաղաքացու հանդեպ:

Հանձնաժողովը նման արտահայտությունների գործածությունն անհարիր է դիտարկում բարձրաստիճան պաշտոնատար անձի կարգավիճակին և կերպարին, քանի որ այն որևէ կերպ չի նպաստում պաշտոնյայի բարեկրթության,

---

[7] http://www.youtube.com/watch?v=7a9xKTArh0s

[8] www.youtube.com/watch?v=6iOxrvnlnpo, տեսագրության 2.21 րոպե:

[9] Նույն տեղում, տեսագրության 2.50 րոպե:

[10] Նույն տեղում, տեսագրության 4.24 րոպե:

օրինավորության վերաբերյալ հասարակական պարկերացումների կառուցմանը, ինչը հանրային իշխանության նկատմամբ վստահության ձևավորման անհրաժեշտ նախադրյալ է:

Ինչ վերաբերվում է միջադեպի մասնակից ակտիվիստների վարքագծին և նրանց գործողությունների շարժառիթներին, ապա Հանձնաժողովը նախևառաջ ցանկանում է նշել, որ Հանձնաժողովը դրանք քննարկում է պաշտոնատար անձի գործողությունների համաչափությունը գնահատելու համատեքստում: Հանձնաժողովն ինքնուրույն գնահատական չի տալիս այդ գործողությունների՝ ընդունված էթիկայի կամ այլ կանոններին համապատասխանության վերաբերյալ՝ այն համարելով իր իրավասության շրջանակից դուրս: Միաժամանակ, Հանձնաժողովը դիտարկում է, որ պաշտոնատար անձի գործունեությանը բացասական կամ քննադատական գնահատական տալիս օգտագործված առանձին արտահայտություններ, ինչպիսիք են «շինարար», «ասֆալտ գցող», ինքնին կարող են վնասել (վիրավորել) հասարակության առանձին խմբերին՝ հանգեցնելով այդ խմբերի դերի և աշխատանքների վերաբերյալ ոչ պատշաճ հասարակական ընկալումների ձևավորմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև հանրային քաղաքականության մեջ վերջիններիս հնարավոր մասնակցության բացառմանը (կոնկրետ խմբին պատկանելու հիմքով), ինչը հակասում է հռչակված համամարդկային ժողովրդավարական արժեքներին:

Հանձնաժողովը փաստում է, որ համաժողովը նվիրված է եղել հանրային մեծ հետաքրքրություն ներկայացնող կարևոր հարցի՝ հանքարդյունաբերության քննարկմանը, որի շրջանակներում արծարծվել են հանքարդյունաբերության բացասական հետևանքները և շրջակա միջավայրի պահպանության գերխնդիրը: Հանձնաժողովը գտնում է, որ ողջամտորեն կանխատեսելի է հասարակությանը հուզող կարևոր հարցերի շուրջ (ինչպիսին է շրջակա միջավայրի պահպանությունը, որին առնչվող որոշումներն ազդում են անձանց կյանքի որակի վրա) ակտիվիստների և հասարակության լայն շերտերի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցություն՝ զուգակցված զգացմունքային քննարկումներով, չափազանցված և վրդովվեցուցիչ խոսքով, սուր քննադատություններով, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնությունների, խմբերի, ակտիվիստների կողմից հարցի վրա ուշադրություն հրավիրող այլ գործողությունների կատարմամբ:

Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ վրդովվեցուցիչ, չափազանցված և սուր քննադատական խոսքը թույլատրելի սահմաններում պաշտպանվում է

խոսքի ազատության իրավունքի համատեքստում[11], և հանրությանը հուզող, հանրային շահերին վերաբերող հարցադրումներում պաշտոնատար անձինք պետք է առավել հանդուրժող լինեն քննադատելի խոսքի նկատմամբ[12], ինչը ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևոր տարր է:

Ընդգծելով «էթիկական» հասարակության կերտման գործում հանրային ծառայողների օրինակելի վարքագծի «արտահանման» և հասարակության մեջ տարածման անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովը գտնում է, որ պաշտոնատար անձ-քաղաքացի շփումներում այլ անձանց կողմից իրավունքի չարաշահումների, իրենց էթիկայի կամ այլ կանոնների խախտումների դեպքում պաշտոնատար անձինք իրենց իրավունքները և շահերը պաշտպանելու համար պետք է դիմեն իրավական մեխանիզմների՝ չխրախուսելով ոչ իրավաչափ վարքագծին համարժեք ոչ իրավաչափ վարքագծի դրսևորմամբ հակադարձելու հնարավորությունը:

Մյուս կողմից, թեև բազմաթիվ իրադրություններ կարող են խնդրահարույց կամ դժվար կառավարելի լինել, այդուհանդերձ բարձրաստիճան պաշտոնատար անձի պատասխանատու կարգավիճակը պահանջում է որոշակի անձնային որակական հատկանիշներ և զգացմունքների կառավարման հմտությունների շարունակական կատարելագործում, ինչը հնարավորություն կտա հակազդել և վերահսկել իրավիճակը բարձր պրոֆեսիոնալիզմով:

Այս համատեքստում, Հանձնաժողովը գտնում է, որ Արամ Հարությունյանի կողմից ակտիվիստների գործողություններին հակազդելու ընտրված միջոցները համաչափ և համարժեք չէին, դրանք չէին կարող նպաստել լարված մթնոլորտի մեղմացմանը, հանրային իշխանության կամ ինստիտուտների հեղինակության պաշտպանությանը, ինչպես նաև հետագա հնարավոր չարաշահումների կամ սադրող գործողությունների կանխարգելմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ **Հանձնաժողովը եզրակացնում է**.

1. Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը թույլ է տվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված էթիկայի կանոնի խախտում, այն է՝ չի ցուցաբերել հարգալից վերաբերմունք այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվել է իր լիազորություններն իրականացնելիս:
2. Սույն եզրակացությունը բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից կարող է բողոքարկվել դատական կարգով՝ մեկամսյա ժամկետում:

---

[11] Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Նիլսենն և Ջոնսենն ընդդեմ Նորվեգիայի, Մեծ պալատ, գործ no.23118/93, պարագրաֆ 52 and 53:

[12] Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Կաստելսն ընդդեմ Իսպանիայի, գործ no.11798/85, պարագրաֆ 42: